ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի թվականի N12

## *ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով այն, որ բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները, բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերը և չեն առաջացնում սերվիտուտ, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, հիմք ընդունելով այն, որ Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի բնակիչ Զորբա Աբասյանը դիմել է Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Նար -Դոս փողոցի 9 հասցեում գտնվող իրեն պատկանող /ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 12.11.1991թ. թիվ 22 որոշման/ / 0.2951 հա օրինական և դրան կից 0,1010 հա հողամասի և նրա վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով.

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Նար-Դոսի փողոցի 9 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Զորբա Աբասյանի գույքային իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0,2951հա հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ բնակելի տուն 39,82ք/մ կառուցված 1960թ, բնակելի տուն 49,00ք/մ կառուցված 1960թ,, բնակելի տուն 85,10ք/մ կառուցված Ծ/Մ 52,90ք/մ կառուցված 1960թ,, Ծ/Մ 27,70ք/մ կառուցված 1960թ,, ծածկ 52,90ք/մ կառուցված 1960թ□, բնակելի տուն 152,30ք/մ կառուցված 1960թ,, Բ/Պ 71,60ք/մ կառուցված 1960թ,, անասնաշենք 38,70ք/մ կառուցված 1960թ,, լողավազան 13,10ք/մ կառուցված 1960թ,, անասնաշենք 37,10ք/մ կառուցված 1960թ,, սանհանգույց 7,90ք/մ կառուցված 1960թ,, թոնրատուն կիսաքանդ 22,90ք/մ կառուցված 1960թ,,

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿԱ մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել Զորբա Աբասյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.Բնակելի տանը տրամադրել հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Նար-Դոսիփոդոցի թիվ 9 բնակելի տուն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ